


2625
2626
2627
2628
2629

2630
2631

84

8-85



Փ-8599 ՍԻԳԼԱՊՈՅԵ

ԿԱՏԱԿԵՐՁՈՒԹՅԵՆ ՄԵԿ ԱՐՅԵ

Ճեղ ԱՌՋԵՐ ՅՐԱՆԵՎԻԼ

Թարգմ. Ա. Ա.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵ

ՅՈՐՄԻՆՆԵ ԵՒ ՄԵՌԵԼ

96
97
98
99



Տեսարանը կը ներկայացնի «Միհլավ» թերքի փայր յայտարարութիւններու գրասենեակը. խօրք դուռ մը, աչ կողմը թիմարու մը կամ նստան մը, ձախ կողմը միմչեւ կուրծքը բարձրացն փայտեայ թերեւ միջնորմ մը, որուն առջեւ հորիզոնական սեղան մը հասարակութիւնը կը բաժնէ պատօնեաներեն, եւ սակայն այդ միջնորմ բալորովին շրամաւրեւ փայր յայտարարութիւններով գրադող պատօնան, ամսից մը կառելի է դուրս ելել եւ ներս մնել: Միջնորմն ետին կայ սեղան մը, սեղանին ետին եղեգէ թիմարու մը եւ թիմարուին ետին պատէն կրօխուած խօսկու յատուկ խողովակի մը, սեղանին վրայ նեռաձայնի զործիք մը, թիմարուին վրայ երթասաւրդ եւ սիրուն մեմենագրուիք մը, որ գրալած է փոքրիկ յայտարարութիւններ խմբագրելով ո՛չ թէ գրելու մեմենային վրայ, այլ սպորական գրիչով մը:

Ելեքտրական լամպաւ մը կախուած է առաստաղին անոր զուարք արգուզարդին վրայ:

Ա. Ռ. Ա. Զ Բ Ի Լ.

Միրել՝ առանձին

(Միրել առանձին, նստած սեղանին առջեւ արագօքէ կը գրէ փաքրիկ թուղթերու վրայ, որն ոք հետդնեաէ կը զա առւորէ մասնաւոր քարթօնի մը մէջ):

Միրել (Թրելսգ). — Թիւ 1611 յայտարարութիւն, նշաւ առւոր գուշակուհի Տիկ. Սէֆօրտ, թուիւտէն պողսաայ, թիւ 47, երջանկութիւն կը պարզեւէ ուորձի միուրի միջոցաւ: Թիւ 1620, ծախու է, ամունալուծման հետեւանօք, ազատարար զօտի մը, երկու փոքր կարճ շուներ, և ժան-Ժակ Ռուսօի գործերը, բոլորն ալ լաւ վիճակի մէջ. դիմել Սիւանալա փողոց թիւ 14: Թիւ 1621, Ալյի կին առոնց զաւկի, չափանց կը ձանձրանայ, կը փափաքի սահիլ սովորի, չառ լուրջ. Բ. Պ.ի., 331 Բոոթ-Խէսթանթ, Պապի փողոց: Թիւ 1622, Ամունանալ փափաքոներուն, մեծ ժամանում Ամերիկուհիներու... (Հեռանայի զանգակը կ'ընդհատէ յանկարծ Օր. Մէրէլի աշխատութիւնը. կը ձգէ զրիշը և ձեռք կ'առնէ հեռանայի գործիքը, խօսելով գործիքին մէջ): Ալլօ՛ Սիիլով թեթիք, այս պարոն, հոս է, բայց զիներու ինդրով ես չեմ զբաղիք... Ալլօ՛, ես միայն փոքր յայտարարութիւններով կը զբաղիմ, զիմեցէք թիւ 928-108. (կը վերսկսի գրելու)... Մեծ ժամանում ամերիկուհիներու, միլիոններու ազահովութիւն, ոչինչ կը վճարուի նախապէս. — Թիւ 1623, վշտահար սիրտ. ախուր պարոն մը կ'ուզէ ամունանեալ երիտասարդ հարաւոտ ազջկան մը հետ, բաւ է որ ան ալ ախուր ըլլայ. — Թիւ 1624... (Դարձեալ կ'ընդհատէ աշխատանքը, խօսելու համար իր ետեւը զբաւած խօսելա խոզովակին մէջ. քանի մը վայրկեանէ ի վեր յաճախորդ մը ներս մտած է, Ֆօրթիւնէն է, երկշոտ կերպավ կը մօտենայ դիխարկը ձեռքին մէջ բանած):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ.

Միրել և Ֆօրփին:

Ֆօրփին. — Բարեւ, օրփորդ, հա... օրփորդ, ես...

Միրել. — (Առանց թողելու խօսելու խոզովակը) Վայրիկան մը, պարոն...

Ֆօրփին. — Շատ լաւ: (կը սպասէ տաքի վրայ, անշարժ, գլուխ բայց):

Միրել. — (Խօսելով խոզովակին մէջ) Լաւ ուրեմն, պարոն Սիրիսն... արդեօք 1614 թիւ յայտարարութիւնը խօսքագուած է զաղուան թիւին համար (կրկնելով) 1614 թիւ... երկրորդ տպագրութիւն... սպասեցէք... ահաւամիկ ընազիրը... (սեղանին վրայէն թուղթ մը կ'առնէ և կը կարդայ) Բորդուկալցի կին մը կը փափաքի մասնել ընտանիքի մը մէջ, ուր աղաքներ գանուին, անոնց սովորեցնելու համար իր յեղուն: (Ժամանակ մը յետոյ): Լա՛ւ, հիմակ, հաճեցէք հարցնել զրաշարապեաթին, արդեօք սրբագրէց 1512 թիւ յայտարարութեան փորձը, յաճախորդը գանգատեցաւ սիսալներու համար... (Խողովակը տեղը կը զնէ, ձիշդ նոյն վայրկեանին հեռածայնը կը հնչէ, մինչ Ֆօրթիւնէ կը փորձէ զրիորդին ոչազպութիւնը հրաւիրել):

Ֆօրփին (Համարձակելով):

Օրփորդ, հո... ես...

Միրել (Հեռածայնը առնելով):

Վայրկեան մը, պարո՞ս:

Ֆօրփին. — Շատ լաւ: (Դարձեալ կը սպասէ):

Միրել (Հեռածայնով). — Ալլօ՛, այս, արկին... Երկոշաբթիի թիւին մէջ յայտարարելու համոր, յայտարարութիւնները պէտք է մեզ յանձնուին այս երեկոյ ժամը 6էս առաջ... :

Ֆօրփին (Ժամացոյցը նայելով նսխիրեն): — Ժամը 6ին բառորդ կայ:

Միրել (Հեռածայնով). — Անգործածելի գործիքները կը զնէք, այս... ինչ, շատ սախազական է, ա՛ն, ո՛չ կարելի չէ. կանխիկ վճարումը սախազողական է... (Պահ մը մարկ կ'ընէ, աչքին ծայրով առեղծուածացին Ֆօրթիւնէն զիսելավ, որ կը սպասէ, յետոյ ինքնիրեն), հանգարտ մարզու մը երեւոյթը ունի սա պարոնը... (վերաբին ձեռք առնելով հեռածայնը) Զափազանց կը ցաւիմ արկին... որոշուած է ուրեմն ձեր յայտարարութիւնը ուրբաթ օր պիտի հրատարակուի... Ցտեսութիւն, արկին: (կը ձգէ հեռածայնը. Ֆօրթիւնէ առաջ կուգայ):



Ֆօրինեկ. — Օրիորդ ներեցէք, ստիպողական գործ ունիմ... (Հեռաձայնի նոր հարուած մը, Մէրէլլ ձեռք կ'առնէ գործիքը) :

Միրելլ. — Օ՛չ, վարպետն է որ եր հեռաձայնէ. (Ֆօրինէլին) փաքը երկվայրկեան մը ես, պարու:

Ֆօրինեկ. — Շատ լաւ. (Ի՞նքնիրեն) այլեւո երկրորդ մը չէ, երրորդն է ասիկա:

Միրելլ (Հեռաձայնիլով). — Այո՛ այս՛, պարոն մախկ կ'ընեմ:

Ֆօրինեկ (Մեռախօսելով). — Ասսուած իմ, երբ ստիպուական գործ ունիմ կ'ըսեմ, կատակի համար ո... բնաւ ստիպուական գործ չունիմ, տակաւին կրնամ շատ երկար սպասել... որքան որ պէտք ըլլայ այս երիտասարդ օրիորդին, որ կ'երեւայ թէ շատ զբաղած է... և շատ ալ լաւ զարգարուած):

Միրելլ (Հեռաձայնիլով). — Այո՛ պարոն, Բիգառլօի գաշմէնքը յայտարարութեանց ձիւղին յանձնեցի... չկրցայ զայն մեքենայով գրել, որովհետեւ մեքենայ չունիմ, նորոգուելու գացած է... (առա մը յետոյ հաճոյակատարութեամբ) ո՛չ պարոն... այս՛, պա՛րոն... հարկաւ պարո՞ն... լաւ պարոն... (Վերջացած է՝ կը ձգէ գործիքը և կը դիմէ վերջապէս Ֆօռմիւնէի): Ի՞նչ կը փափաքիք պարո՞ն:

Ֆօրինեկ (Մօռենալով). — Ահաւասիկ... Օրիորդ... կոմտիկին...

Միրելլ. — Օրիորդ :

Ֆօրինեկ. — Օրիորդ; ես... ես կ'ուղեմ յայտարարութիւն մը ձեր թերթին:

Միրելլ. — Ի՞նչ վերնազիք:

Ֆօրինեկ. — Ներոզութիւն:

Միրելլ (Բացարելով). — Վաճառականակա՞ն, մնակառակա՞ն, պաշտօնի՛, վարձակալութեա՞ն, թէ կորսուած օռոարկայի յայտարարութիւն:

Ֆօրինեկ. — Ամուսնական, այսպէս ըսելով...

Միրելլ. — Երկրորդ ցուցակ... երեք ֆրանք երեսունհինգ սանդիմ, երեսուն երկու գիր է տողը...:

Ֆօրինեկ. — Դինք կարեւորութիւն չունի:

Միրելլ. — Յայտարարութիւննիդ իմբագրած էք:

Ֆօրինեկ. — Այո՛, հարկաւ... ահաւասիկ... (մէկի)

մէկին բոլոր գրամմները կը քրքրէ, որոնցմէ զանազան թուղթեր կը հանէ և կը քննէ) ահաւասիկ... էք... ահաւասիկ... ոչ... (փնտուելէ գաղրելով) ապուշ բան է առ, կորոնցուցեր եմ զայն:

Միրելլ. — Հոգ չէ:

Ֆօրինեկ (Ի՞նքնիրեն). — Զայն գիշերուան ոհղանիս վրայ ձկած ըլլալու եմ...

Միրելլ. — Հիմա գարձեալ կը չմնենք զայն:

Ֆօրինեկ. — Նախկին ձեւով... կամ գիշերագրեսովիս դրամնը...

Միրելլ. — Բուժք ինծի մօտաւորագէս ի՞նչ ըսել կ'ուղէք:

Ֆօրինեկ. — Լաւ, ահաւասիկ... ես... ես բարեկամ մը ունիմ որ մ'ուղէ ամուսնանալ...

Միրելլ. — Բարեկամ մը:

Ֆօրինեկ. — Այո՛, բարեկամ մը... գաւառացի մը... հայրաքերութիւններ չունի, ընկերութենէ չախորդիր: Միայնութիւնն ալ չսիրեր... այնպէս որ կ'ուղէ կին մը գտնել, առանց շատ նեղուելու:

Միրելլ. — Անոր հատ մը պիտի հայթայթենք... (գրելով) «Երեւելի երիտասարդ մը....» երեւելի է բարեկամդ:

Ֆօրինեկ. — Ասսուած իմ... անկէց աւելի երեւելիններն ալ կը գտնուին... անկէց նուազ երեւելիններն ալ կարելի է գտնել...

Միրելլ. — Ի՞նչ տարիք...

Ֆօրինեկ. — 32:

Միրելլ. — Հասաւատն գիրք մը ունի:

Ֆօրինեկ. — Կալուած ներու տէր է... 15000 ֆր. եկամուտ և նոյնքան ալ ձագարներ...

Միրելլ. — Ի՞նչպէս... նոյնքան ալ ձագարներ:

Ֆօրինեկ. — Բանէ ուղեցի թէ առաօպերական ձագարի որջեր ունի, որջեր թիւնէլին չափ բազմամարդ...

Միրելլ. — Գիշեր կը բնակի:

Ֆօրինեկ. — Այո՛... չափազանց հաճելի տուն մը... գրէթէ զգեակ մը... զետակ մըն ալ կայ... տը կարելի է կարթուի ձուկ որսալ... յետոյ ձաշարահէն նէվերի զանդակաւունը կը տեսնաի, որ քառասուն քիլոմետր հեռու է թռչունի արագութեամբ... սքանչելի տեսարան...



Միրելլ (Գրելով).— Այս ատեն ըսենք . «Երխասարդ երեւելի պարսն մը , սքանչելի դիրք , քառասուն տարեկան . . . երեսուն երկու հազար ֆրանք եկամուտ . . . »

Ֆօրբինէ. — Ո՞չ . . . ներսղութիւն . . . երեսուն երկու թիւք իր տարիքն է . . . քառասունը թոշունի արագութեամբ գիլօնէթինէրը :

Միրելլ . — Ա՞չ լու , (գրելով) «սքանչելի դերք , երեսուն երկու տարեկան , գիւղարնակ . . . կ'ուզէ ամուսնանալ . . . » (Ֆօրբինէին) ձեր բարեկամը որի՞ հետ կ'ուզէ ամուսնանալ :

Ֆօրբինէ. — Հէ . . . չգիտեմ , կնոջ մը հետ . . .

Միրելլ . — Ի՞նչ աեսակ , այրի՞ , ամուսնալուծեա՞լ , աղջի՞կ :

Ֆօրբինէ. — Աղջիկ :

Միրելլ (Գրելով).— Ուրեմն «կ'ուզէ ամուսնանալ աղջկան մը հետ . . . » գո՞րչ , խարտեա՞չ :

Ֆօրբինէ. — Կարեւորութիւն չունի , գլխաւորը անոր խելացի , պարկեցաւ , աշխատատէր և լու նկարագրի տէր ըլլալն է . . .

Միրելլ . — Հարո՞ւստ պէտք է ըլլայ :

Ֆօրբինէ. — Եթէ հարուստ է տւելի աղէկ , բայց անհրաժեշտ պայման մը չէ :

Միրելլ . — Ա՞չ , (պահ մը լուս) կ'երեւայ թէ շուտ տղեղ է ձեր բարեկամը :

Ֆօրբինէ. — Ա՞չ , ո՞չ . . . իսչո՞ւ համար :

Միրելլ . — Որովհեան պահանջկու չէ . . . : Այսօր տասն հինգ հազար ֆրանք եկամուտ անեցող պարոնները առ նուազն հինգ հարիւր հազար ֆրանք դրամօժիտ կը պահանջին :

Ֆօրբինէ. — Կը կարծէք :



Միրելլ . — Ամէնէն լու . ես կրնամ գիտնալ զայն , չարաթը առնուազն 80 ամուսնութիւն կը կատարեմ :

Ֆօրբինէ. — Ի՞ս բարեկամն խելացի մըն է :

Միրելլ . — Իր իրաւունքն է :

Ֆօրբինէ. — Ան կը հաւատայ թէ զրամի չկրնար երշանկութիւն բերել :

Միրելլ . — Աւելի աղէկ իրեն համար :

Ֆօրբինէ. — Զէք կարծեր թէ իրաւունք ունի ան :

Միրելլ . — Հա՛րկաւ , հա՛րկաւ :

Ֆօրբինէ. — Հիմակ ինքնիրեննիդ պիտի ըսէք «ադ արարոնք ասնձ մըն է . . . »

Միրելլ . — Բնաւ երբէք . . . իմ արամագրութիւնները շատ ազնիւ են . ընդհակուակը կը հիմնամ իր վրայ . . . արդէն բնծի չվերացերիր ասիկա:

Ֆօրբինէ. — Վերջապէս իր միակ փնտուածը խելացի ընկերունի մըն է , որ . . . որ . . .

Միրելլ . — Հասկցաւեցաւ . . . «պարկէչա , լուրջ , լունկարազրի աէր . . . » արդէն չորս տող եղաւ երեք ֆրանք երեսունհինգ անդիմոց :

Ֆօրբինէ. — Ազուոր վճարուող զրականութիւն մ'է առ :

Միրելլ . — Տող մըն ալ պէտք է հասցէն հաշուել . . . «զրել . . . որո՞ւ . . . »

Ֆօրբինէ. — Հետեւեալ սկզբնաստակրուն Ա . Ժ . Թ . . . Ա . Բ . Թ . . . Ա . Ն . Թ . . . Ա . Վ . Թ . . . Թ . Բ . Օ . Թ . Բ . Օ . Կեդրանական պիտոր , Բարիզ :

Միրելլ (Գրելով).— Թ . Բ . Օ . . . (Հեռաձայնի հնչում . . .) երկվայրկեան մը պարոն . . .

Ֆօրբինէ. — Շատ լու :

Միրելլ (Հեռաձայնիլով).— Եորէ՞ն , պարոն : Արդէն ձեզի պատասխանեցի թէ շափաօանց հազար եմ ձեր ըրած պատրուոյ . . . ըրայց չեմ ընդունիր . . . ո՞չ , ո՞չ , անօգուտ է պազելը , հրամացեցէք ինչ որ կ'ուզէք , բայց պարտականութենէս զուրու . . . Ալլօ' , պարտականութենէս զուրու կ'ուզեմ որ զիս հանդիսաւ ձգեն . . . (չափազանց բարկացած) որովհետեւ . . . մեր տունը մօրու հետ . . . ձեզ չվերաբերիր , ո՞չ պարո՞ւն , ո՞չ (կ'ընդհատէ խօսակցութիւնը և կատաղութեամբ զործիքը տեղը կը զնէ պառալով) . Է՞ն , Էօֆ , (յետոյ կատազի նայուածքով մը սպառափած Ֆօրբինէն զիսկելով) . ա՞տ սկսած է զիս կատազեցնել այդ ժարդը :

Ֆօրբինէ. — Եերեցէք , շատ աեղեակ շեմ գործին :

Միրելլ (Առանց զայն մտիկ ընելու).— Իրապէս երբեմն մտրգիկ կան որ շատ յանդուդն են : Սոսկալի է առ : Կը կարծէն թէ փոքրիկ զիրք մը ունենալով , աշխարհը իրենց կը

պատկանի, և թէ կը բաւէ ծռել միայն... Ա՛հ, բայց ո՞չ,
երբէք իմ սեռո չէ ատիկա, կ'ապահովցնեմ ձեզ:

Յօրփինեկ.— Օրիորդ, չեմ կասկածիր այդ մասին:

Միրել.— Պարզ մեքենագրող մըն եմ ես, բայց ես այ
իմ գողագործներս տնիմ, զիս հողմացոցի մը տեղ դնելու չէ:

Յօրփինեկ.— Ահաւասիկ լաւ խօսք մը:

Միրել.— Բայց խորհուրդ կուտամ անոր շատ չպնդել,
կը հասկա՞ք: Երրորդ անգամն է ատիկա, չորրորդին թող
երեսին վրայ ձեռ քիս հարուածին սպասէ:

Յօրփինեկ.— Պիտի ջանայ միշտ հեռածանել ձեզ, կո-
րիի չէ կասկածիլ այդ մասին:

Միրել.— Ա՛հ, կը ցաւիմ որ վար չի գար այս վայր-
կեանիս... այն ատեն պիտի տեսնէիք:

Յօրփինեկ.— Հաճոյքով... բայց որո՞ւ մասին կը խօսիք:

Միրել.— Վերի յարկը գոնուող պարոնին մասին...
Սիլվապի տեղեկութեանց բաժնին պիտն է, գեղեցիկ ջորի մը:

Յօրփինեկ.— Ի՞նչ բառ ձեզի:

Միրել.— Ինձի ի՞նչ ըրաւ, ինձի հետ ամուսնակ կ'ու-
զէ, այդ ապոչը:

Յօրփինեկ.— Իրաւունք ունի:

Միրել (Միշտ բարկացած).— Ի՞նչ բախք:

Յօրփինեկ.— Կ'ըսիմ թէ յանցաւոր է... հրէշ մ'է:

Միրել.— Ժամանակէ մը ի վեր իր կնամեծարութիւն-
ներուն առարկան զարձած եմ, միտքը զրեր է զիս կնութեան
տունել և ահա երեք օրէ իրարու ետեւէ ինձի կը հեռածայնէ
երեկյեան ժամը նին, ձեռ քս խնդրելու համար... ապօ՞ւչ:

Յօրփինեկ.— Եւ դուք կը մերժէք:

Միրել.— Աւժգնորէն:

Յօրփինեկ.— Ի՞նչո՞ւ:

Միրել.— Ի՞նչո՞ւ թէ ինչո՞ւ՝ որովհետեւ չեմ սիրել զայն:

Յօրփինեկ.— Ա՛հ, թերեւս ձեր միրար արդէն գրաւուած է:

Միրել.— Սիրաս ոչ մէկուն կողմէն գրաւուած է, բայց
ամէն պարագայի մէջ այդ պարոնը չէ որ զայն պիտի գրաւէ:

Յօրփինեկ.— Ծէր է արդեօք:

Միրել.— Ո՛չ... հաղիս քառասուն տարեկան... եւ
հրաշալի դիրք մը ունի...:

Յօրփինեկ.— Իր պաշտպանութիւնը կը իրեւս ձեզի
պատակար ըլլալ:

Միրել.— Ես իմ աշխատանքս կէտ
առ կէտ խղճանորէն կը կատարեմ...
պաշտպանի պէտք չունիմ:

Յօրփինեկ.— Աւշաղբաթիւն ըրէք
սիրոց վշտին, զիս հողմացոցի մը տեղ դնելու չէ:

Միրել.— Ճիշդ է... մանաւանդ որ
չափազանց բարկացած է... երբեք չանդուրժեր վիճաբանել
իր հետ... կատարեալ բանապես մըն է:

Յօրփինեկ.— Եւ կը համարձակիք անոր դէմ կինալ:

Միրել.— Այսու:

Յօրփինեկ.— Հակառակ իր հրաշալի գիրքին:

Միրել.— Հոգս անդամ չէ իր գիրքը... իր դրամը...

Յօրփինեկ.— Եւ եթէ վրէժ լուծել ուզէ, քնչ պիտի ընէք:

Միրել.— Զգիտեած:

Յօրփինեկ.— Պիտի հաւանիք վիրջապէս անոր հետ ա-
մուսնալու...:

Միրել.— Այդ անկարելի է, երբեք:

Յօրփինեկ (Սփանչացածով).— Դուք քաջ էք:

Միրել.— Ո՛չ, քաջ չեմ ես անշահանդիր եմ, ահա ամէնը:

Յօրփինեկ.— Լաւ ուրիմն, Օրիորդ,
ներեցէք որ քեզ բան մը բահմ, գեղեցիկ
բան մը:

Միրել.— Ի՞նչ:

Յօրփինեկ.— Անկեղծօրէն աղէկ բան
է անշահանդիր ըլլալը:

Միրել.— Այսպէս կը կարծէք:

Յօրփինեկ.— Այսու... ո՛չ, սպասեցէք
աղէկ չէ, գեղեցիկ է:

Միրել (Զուտքանալով).— Ո՛հ:

Յօրփինեկ.— Եւ երբ մարդ ձեզի չափ սիրան է, գեղե-
ցիկն ուրեիի բան մ'է, գերմարդկացին է... երկնալին է...
հաղութեան է:

Միրել (Խնդրալով).— Դուք... արդէն վճարեցիք իմ վարձքը

Յօրփինեկ.— Ո՛չ բոլորպին, երբ բանէ մը գոն մնամ,

աղապիտի քնարերգական վայրկաններ ունիմ:

Միրել.— Գո՞հ էք ուրիմն:

Յօրփինեկ (Սփանչացած).— Սփանչացած եմ:




Միրելլ.— Ի՞նչ բանի մասին, Առաւած ի՞ն:

Ֆօրփինէ.— Զեղ այդքան վճռական, այդքան քաջ տեսնելու... չեմ հանջնար ձեզ, բայց իրաւ որ հաճոյք կը պատճառէ ինձ այս բանը, Ահ, կը հասկնամ հիմակ թէ ինչ չու կը փափաքին ձեղ հատ ամուռնանալ, և եթէ կարենացի ինքինքիս թոյլ առալ...

Միրելլ.— Ի՞նչ պիտի ընէիք:

Ֆօրփինէ.— Լաւ մը չեմ գիտեր... ձեզի փունջ մը պիտի նուիրէի... Ֆրանսուա Գօրէն արտասանութիւններ պիտի ընէի... ձեղ ընթրելու պիտի հրաւիրէի... ձեզի հարը պիտի նուազէի... ձեզի...

Միրելլ.— Ահ, կը շփացնէք զիս:



Ֆօրփինէ.— Բայց կը զսպեմ ինքինքս, վըստան եղէք, կը զսպեմ ինքինքս:

Միրելլ (Խողալով).— Թիփ մըն էք դուք:

Ֆօրփինէ (Լըջօրէն).— Լաւ թիփ մը :

Միրելլ.— Կարծեմ թէ այս', և լաւ թիփեր կը նմանին անշահախնդիր աղջիկներուն, փողոցները կարելի չէ զանել զանոնք:

Ֆօրփինէ.— Այսպէս որ դուք եւ ես մէկ մէկ բացառութիւններ ենք այսպէս ըսելով..., մանաւանդ դու'ւք:

Միրելլ.— Ո՛չ... բայց այդպէս թող ըլլայ... եթէ կ'ուզէք անմիջապէս զիս հինգ ոտքով հորթի մը նմանցուցէք:

Ֆօրփինէ.— Ո՛չ, այդ նմանութիւնը ամէնէն վերջինն է դոր պիտի ընտրէի:

Միրելլ.— Վերջապէս դուք ինձի համար պատկեր կը չինէք, և չիս կը պատկեք զամփնիներով, կարծեմ թէ հանրապետութիւնը ազատած ըլլամ... բայց կ'ապահովցնեմ ձեզ թէ այդքան խանդավառութեան արժանի չիմ, արդիօք երեսիսամ էք դուք:

Ֆօրփինէ.— Ո՛չ:

Միրելլ.— Ո՛չ ալ ակազիմական:

Ֆօրփինէ.— Ո՛չ ալ ապ:

Միրելլ.— Ցաւալի է, շոքոլայէ մէտայլ մը նուիրել կուտայիք ինծի, խննարհութեան երկրորդ աստիճան, Օր, Մէրէրէլ, Սիբիր թերթի մեքենագրուհին:

Ֆօրփինէ (Ականջը սրելով).— Հէ, Մէրէլ ըսի՞ք:

Միրելլ.— Ի՞նչ, զարմացուց ձեզ:

Ֆօրփինէ (Որ մտածումին հետեւելով).— Մէրէլ կը կոչափք, և դուք հոս ամբողջ օրը ելեքտրական լամպարի մը լոյսին տակ, զեանայարկի մը խորը, խոնաւ զբասենեակի մը փոշիներուն մէջ կ'անցունէք, Մէրէլ կը կոչափք և դուք միշտ այդ աթուին վրայ էք, ոսրասակելի՛ է աս:

Միրելլ (Արջութեամբ).— Հարուստ չենք մենք:

Ֆօրփինէ (Ճարունակելով).— Եւ ի՞նչ վաստակելու համար, օրական հի՞նգ ֆրանք:

Միրելլ.— Ո՛չ, Յ ֆր. ՅՅ սանդիմ:

Ֆօրփինէ.— Յ ֆրանք ՅՅ սանդիմ, Յ ֆրանք ՅՅ սանդիմ շահելու համար կը համակերպի՞ք այս կեանքին, դուք որ արխան ունիք ձեր երակներուն մէջ: Ամէն պարագայի մէջ շատ տիստը է խորհի թէ ձեզի պէս արարած մը ծնած է յաւիտենապէս այսպիսի սոսկալի աշխատանքի մը վրայ:

Միրելլ.— Ո՛չ, սոսկալի:

Ֆօրփինէ (Կարուկ).— Այս', սոսկալի, դուք գտառապատճ էք հաւաքելու, ամփոփելու թերթի մը մէկ էջին մէջ մարգկային բոլոր ապաւչութիւնները, բոլոր ընչաքաղցութիւնները, բոլոր խեղկատակութիւնները: Ահա թէ ի՞նչ են ձեր փոքրիկ յայտարարութիւնները, անպայման ձեզ կը բարեխցնէ յաճախ այս աշխատանքը:

Միրելլ.— Ծուտ կը յափրանամ:

Ֆօր.— Յետոյ մարդ կը խեղդուի հոս, պատուհան խոկչկայ:

Միրելլ.— Փոքրիկ ծակ մը կաց հոմ..., բայց զետին հաւասար է: Փողոցին բոլոր միքրոսկերը հոն կը խոնախն, չիմ համարձակիր զայն բանալ:

Ֆօր.— Զե՞ս համարձակիր զայն բանալ, չիս խեղդուիր ուրիմիւ: Հոս խոնաւութիւն կը հոսի, պաշտօնեայի կեանք, հին թուղթերու զէզ կը հոսի, ի՞նչ կը չնչէք այս մառանին մէջ: առանց օդի՝ առանց լոյսի, առանց արեւի, արեւուր, պղպիկ գործաւորուհի, արեւուր, տեսած էք եք երեք զայն, դուք որ Մէրէլ կը կոչափք, զփաէ՞ք դոնէ ի՞նչ է ան:

Միրելլ.— Կիրակիները, վէնսանի անստառին մէջ երբեմն կը տեսնամ զայն...

Ֆօր. (Մելամաղոծորէն). — Աստուած ի՞մ, որքան ախուր
է հոս, եթէ համարձակէի, ձեզ պիտի նմանցնէի պկափկ ծա-
զիփի մը, որ կը խամբի... Բայց չեմ համարձակիր, քիչ մը
շատ պաշտօնական է, այլ ևս չգործածաւիր... .

Միրէլլ (Փառելով). — Ծնորհակալ եմ... տակաւին թու-
մած ծաղիկ մը չեմ...

Ֆօր. — Արդէն իսկ տժգոյն ծազիփ մըն էք, քեզի շատ
կը յարձարի, արդէն հրապար մըն ալ ան է բանաստեղծական
մարդոց աշքին, բայց բժիշկներուն համար ատիկա անարիւ-
նութեան, թոքախտի նշան է. երբեք չէ՞ք հազար:

Միրէլլ. — Ի՞նչպէս չէ. երբ որ հարբուխ տնենամ:

Ֆօր. — Երբեք ցաւ չէ՞ք զզար:

Միրէլլ (Քիչ մը ծաղրական). — Ո՞չ, իսկ դո՞ւք:

Ֆօր. — Ե՞ս, ես ցաւ կը զզամ... . ձեզ հոս տեսնելով:

Միրէլլ. — Բայց պէտք է ապրիլ:

Ֆօր. — Գացէք գործերնուդ, առ չէ կեանք ըսուածը.
Կեանքք, աւելի առողջ, աւելի լայն, աւելի գուարթ բան մ'է.

Միրէլլ. — Ի՞նչ է ուրիշն, բաէք ինդրեմ:

Ֆօր. — Ան, ձեր ըրածին բոլորովին հակառակն է, ապ-
րիլ, գլուխը բարձր բռնել է, չնջել, երկինքը դիտել է,
սաքի ըլլալ է... կը հատինա՞ք, սաքի վրայ ըլլալ:

Միրէլլ (Բնազդաբար սորբի ելլելով). — Այս՛, հարկաւ...
սորբան հաճոյք պիտի պատճառեր ան ինծի... .

Ֆօր. (Անող հետաքրքրաթեամբ մը). — Ա՞չ, նայեցէք,
պիտի ուզէի որ. ճանչնացիք ամառնային առա-
ւոտեան մը պաշտելի վեհութիւնը, այն առեն է որ միայն
մարդ լայնօրէն, ամբողջօրէն գոյութիւն ունենալուն զդա-
ցումը անի. այն առեն է որ իրաւունք անի մարդ կեանքը
գեղեցիկ և բարի գոտնելու... . ին ժամացոյցը ժամը 5 կը
հնչէ... . կը բանաս պատռհանդ... . ամբողջ տունը արդէն
լեցուն է խարսիաշ լոյսով... . ծիրանեղոյն օդը լեցուն է
անտեսանելի թշչաներու ձայնով, որոնք առաւօտեան
զուարթութիւնը կ'երգեն... . լերան կողէն սշխարի հոս մը
կ'անցնի... . զետակին վրայ անուշ շսփի մը տակաւին կը
տատանի... . ամէն բան թարմ է, ամէն բան չնորհալի է,
աշխարհը բոլորովին նոր, մարդ ինքինքը թեթեւ, թեթեւ
կը դգայ... . (Լուսթիւն մը, վայրկեան մը կ'երազեն զգայուն
մելամաղձութեամբ մը, յետոյ):

Միրէլլ (Բաղցրաբար). — Ի՞նչու եկեր ինծի կը պատմէք
բոլոր առնաք. հանդարտ և անհոգ էի... դուք զիս կ'ամբա-

րոյացնէք ձեր անիշխանական քարոզներով... . երկու օր վերջ
աւ չիտի կրնամ աշխատիլ... .

Ֆօր. — Աւելի լաւէ, (Ծեսնելով որ Մէրէլլ զինքը կը զիտէ
զարմացած) ձեր հոգին քիչ մը փոշոս էք... . մաքրուելու
պէտք ունէք... . թոթուեցի անոր փոշիները... . (Մէրէլլ կաո-
կածանքի շարժում մը կ'ընէ) այս՛, այս՛, յանձնուեցէք ե-
րազելու քաղցրաթեան, մտածելով թէ, թերեւս տեղ մը
դղեակ մը կայ, որուն ամբունին կրնաք ըլլալ:

Միրէլլ. — Այս՛, այս՛, սպանիական դղեակ մը:

Ֆօր. — Ո՞չ, ֆրանական դղեակ մը:

Միրէլլ (Աւսերը թօթուելով). — Ի՞նչ անիմաստ երազ:

Ֆօր. — Ո՞չ այնքան որքան կը կարծես, ո՞չ այնքան:
Չեզ շատ լու կը տեսնեմ հնա, պարզ կտաւէ շրջազգեստով,
գլխարաց վազելով խոտերուն մէջ, մշակելով ելակներ և
կանկառներ, հունտեր նետելով հաւանցին մէջ, հոկելով
լուացքները և այգեկուաթթին վրայ... .

Միրէլլ (Հբապուրուած). — Ո՞չ, այս՛... . հրաշալի պիտի
ըլլայ ատիկայ... .

Ֆօր. — կը տեսնէք սա իսքրիկ պաշտօնանին, իր խո-
նաւ գետնայարկէն խուսափած, որ շուտով քաշառողջ և
հրաշալի եղած է: Ո՞չ, բայց կը տեսնէք զայն հո՞ն՝ ինք-
զինքը բաց օդին տուած, ազատ, համարձակ, երջանկու-
թեան զագաթթնակէտին հասած... . Հարիւր մզոն հեռու Բա-
րիգէն, իր թերթերէն և իր միքրոզներէն:

Միրէլլ. — Ի՞նչ բան է հնա՞ կոչածնիդ:

Ֆօր. — Հին զղեակ մը զասիթափի մը վրայ... . Սրան,
ճաշաբան, խազաբան, զետազարկ, գրադարան, խոհանոց,
լուացքաբան, տաօնըզէկ ննջարան, ախոռ կառատուն, պալ-
քան, պարտէզ, երեսուն հեքթար անսառ և մարգեր... .

Միրէլլ. — Բա՛ւ է, բա՛ւ է:

Ֆօր. (Վերջացնելու համար). — Եւայլն եւայլն:

Միրէլլ. — Ի՞նչ է արդեօք դղեակը:

Ֆօր. — Մասթուլէն է:

Միրէլլ. — Ի՞նչը:

Ֆօր. — Ի՞մ տունս:

Միրէլլ (Ապշած). — Եւ զիս հնա կը տեսնէք:

Ֆօր. (Աւժզնօրէն). — Այս՛, օրիսրդ:

Միրէլլ. — Զեր առէնը:

Ֆօր. — Այս՛, օրիսրդ:

Միրէլլ. — Պիտի ուզէի որ ես...

Յօր . — Այս' , օրիէրդ , պիտի ուզէի , կ'ուզե . . .
 Միրել (Խնազինքէն եղած) . — Ա՛հ , լաւ ուրեմն , լաւ ուրեմն :
 Յօր . — Այս այսպէս է .
 Միրել . — Բայց այն ատեն , գուք զի՞ւզը կը բնակիք :
 Յօր . — Այս' , իմ ճաշարանէս կը տեսնուի . . .
 Միրել . — Եէվէրի զանգակատունը :
 Յօր . — Շատ ձիւզ :
 Միրել . — Ի՞նչպէս , գուշք էք ուրեմն պարսն թ . թ . 0 .
 Կեղրսն . պիւրո :
 Յօր . (Խոնարհելով) . — Նոյն ինքը :
 Միրել . — Արդէն քիչ մը կառկածեցայ այդ մասին :
 Յօր . — Կարձ կապենք , դիմեցէք զիս լաւ . մը . . . Չեր
 առջեւը ունիք երիտասարդ երեւելի պարսնը , երեսուն երկու
 տարեկան , հրաշտի կացութիւն , որ կը փափաքի ամուսնա-
 նալ պարկեշտ , լուրջ աղջկան մը հետ . . .
 Միրել (Խոռվքը ծածկելու համար) . — Քալով բուն խնդրին
 առանք վեց ֆք . քանի հինգ սանդիմ է :
 Յօր . — Ի՞նչ :
 Միրել . — 16 ֆրանք 25 սանդիմ կը պարտիք : 5 առո
 յայտարարութեան համար :
 Յօր . (Գլուխը թոթուելով) . — Ո՛չ :
 Միրել . — Զէք ուզեր այլ ևս զայն յայտարարել :
 Յօր . — Այսինքն . . . չեմ դիմեր . . .
 Միրել . — Ես աւ չեմ դիմեր :
 Յօր . — Ի՞նչպէս չէք դիմեր , դուք զիտէք զայն . . .
 ձեզմէ կախում ունիք :
 Միրել (Զափազանց յուզուած , տակնուվրայ եղած) . —
 Պարոն . . . պարոն . . . բայց խենդութիւն է այս , տակսին
 կէս ժամ առաջ քեզ ձանչցայ դեռ . . .
 Յօր . (Զգայնուա) . — Հոգ չէ , ինձի համար կարեւորութիւն
 չունի , դուք այն աղջիկն էք , լուրջ պարկեշտ , եւայցն , զոր
 կնութեան առնել կ'ուզէ զիւզաբնակ երիտասարդը :
 Միրել (Կրակի վրայ) . — Ի՞նչ կ'ուզէք որ պատասխանեմ :
 Յօր . — Պատասխանեցէք այս' . . . (Կ'անցնի բաժանումէն
 և կը համար Մէրէլլի մօտ) , բաէք կ'ուզէք հետո զալ հո՞ն :
 Միրել . — Ուշագրութիւն ըրէք ձեր խօսքերուն : Եթէ
 կատակ մըն է բրածնիդ , զզուելի պիտի ըլլայ . . .
 Յօր . — Քարշելի պիտի ըլլար , պարկեշտ մարդ մը այդ-
 պիտի կատակներ չըներ , օրիորդ Մէրէլլ , պատիւը ունիմ ձեր
 ձեռքը խնդրելու :

Միրել . — Շատ չուտ է :
 Յօր . (Խճապարելով) . — Պատահմունքը մէկ մազ մը միանց
 ունի , գեցուկէս տարիէ ի վեր ձեզ կը պատահմ , կարծեմ թէ
 ալ կը բաւէ , որոշամք մը տանք . . . այս' կամ ո՛չ :
 Միրել . — Նոյն իսկ չեմ գիտեր թէ ի՞նչպէս կը կոչուիք :
 Յօր . — Լաւ ուրեմն , գուք պիտի կոչուիք տիկին ֆու . . .
 (Հեռաձայնին յանկարծակի հնչյունը իր խօսքը կը կարէ) :
 Միրել (Գործիքը ձեռք առնելով) . — Երկվայրկան մը :
 Յօր . — Շատ լաւ :
 Միրել (Խօսելով) . — Ալլօ' , հէ՛ , գարձեալ դուք էք ,
 (Ձօրթիւնին , լրուած ձեւով մը) նորէն ան է :
 Յօր . — ո՞վ է որ :
 Միրել . Ան , տեղեկատուութեանց պետք . . . նորէն սկսաւ :
 Յօր . (Տիրականօրէն ձեռք առնե-
 լով հեռաձայնը) . — Մի՛ չարժիք ,
 ես պիտի պատասխանեմ իրէն :
 Միրել (Փորձելով զայն ես կեց-
 նել) . — Ո՛չ , ո՛չ , ձգեցէք խենթու-
 թիւն պէտք չէ :
 Յօր . — Ի՞նչու չէ , պիտի տեսնէք
 հիմակ :
 Միրել (Յազթուած եւ ապչած)
 . — Ո՛չ :
 Յօր . (Հեռաձայնելով) . — Ալլօ' ,
 ա՛հ , գուշք էք որ օրիորդ Մէրէլլի
 ձեռքը ստանալ կը փափաքիք , լու-
 ուրեմն , կընաք այլեւս մէկ կողմէ քաշուիլ ձեր ուազ . . . (Պո-
 ռալով) Ծեր սազ կ'ըսեմ :
 Միրել (Ժաքէթէն քաշելով) . — Բայց խենթ էք դուք ,
 խենթ էք :
 Յօր . (Շարունակելով) . — Ալլօ' , ալլօ' , ո՞վ եմ ես , օ-
 րիորդ Մէրէլլի նշանածն եմ , և ան ալ ձանձրացած է ձեր
 գործարանէն , ալ հոս ոտք չպիտի դնէ , ձեզի իր հրաժարա-
 կանը կուտամ :
 Միրել . — Ո՛չ , ո՛չ , չեմ թոլլարեր ձեզ . . .
 Յօր . (Մէրէլլին , գոհ դէմքով մը) . — Եղաւ , պաշտօ-
 նոնկ եղած էք :
 Միրել . — Պաշտօնանկ եղած :
 Յօր . (Հեռաձայնին) . — Հոս նայեցէք , ձեզ հարսնիքի
 շեմ հրաւիրեր , բայց ազատ էք զայն յայտարարելու ձեր



թերթին մէջ . . . (Կախելով գործիքը իր տեղը) Գիշեր բարի ,
ծերուկս , ա՛լ մինակդ խօսէ :

Մերէլլ (Կէս մը ժպտոն , կէս մը լարկացած) . — Բայց ,
սարսափելի է աս :

Ֆօր . (Չեռքերը շփելով) . — Ահա , լաւ մը գործերնիդ
խանգարեցի , ապագանիդ խորակեցի . . . եղածը կարելի չէ
դարձանել . . . Ամէն բան լաւ կ'ընթանայ , հիմակ եկէք եր-
թանը ընթրել :

Մերէլլ . — Բայց . . .

Ֆօր . — Բայց մայց չկայ , (Օդնելով անոր որ հագուի)
աշաւասիկ ձեր գլխարկը , ահա ժաքէթը , շոտ , կը սիրեմ
ձեզ . . . Կը փախցնեմ ձեզ , կեանքն է որ կը սկսի ձեզ համար :

Մերէլլ (Համակերպած) . — Գոնէ անուննիդ ըսէք ինձի :

Ֆօր . (Արագօրէն) . — Կուռնքի անունն Յօրթիւնէ , որ լո-
ւիներէնէն առնուած է և կը նշանակէ «Երջանիկ մարդը» . . .
բնտանեկան անունն Յօրթէն , առ ալ լատիներէնէն կուզայ :

Մերէլլ (Չեռնոցները կոճկելով) . — Եւ ի՞նչ կը նշանակէ :

Ֆօր . — Միեւնոյն բանը , «Երջանիկ Մարդը» :

Մերէլլ (Խնդալով) . — Որքա՞ն երջանկութիւն :

Ֆօր . — Մեր երկուքին ալ բաւելու չափ , (Տանելով Մէ-
րէլլը) շուտ , մեկնինք . . . (Կանգ առնելով զրան սեմին վրայ) ,

Բայց նախ . . .

Մերէլլ . — Ի՞նչ :

Ֆօր . — Պէտք է որ լաժանորդ գրուիմ Սիբուլին . . . իրա-
պէս պարտական եմ այս բանը անոր : (Կը մեկնին) :



2625
2626
2627
2628
2629
2630
2631

ՀՀ Ազգային գրադարան



NL1861596

ՀՀ Ազգային գրադարան



NL1861595

ՀՀ Ազգային գրադարան



NL1861594

ՀՀ Ազգային գրադարան



NL1862437

ՀՀ Ազգային գրադարան



NL1861593

ՀՀ Ազգային գրադարան



NL1861592

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1861591

